

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՅ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱԿԱՐԳ ԱՆՀԱՏ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՍԱԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ԱՐԺԵՔՆԵՐ

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ

**հանրային հարցման
արդյունքներ**

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ
ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԳՈՅՈՒԹՅՈՒՆ

ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԻ
ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ
ԱՄԲՈՂԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երևան
հունիսի 2
2015թ.

ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

ԿՅԱՆՔԻ ԲԱՐՁՐ ՈՐԱԿ

Հարցման խորապատկերը

Վերջին երկու տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մեջ կտրուկ փոփոխություն տեղի ունեցավ. Հայաստանը միացավ Եվրասիական տնտեսական միությանը, իսկ Եվրամիության հետ շուրջ երեք տարի բանակցված Ասոցացման համաձայնագիրն այդպես էլ չստորագրվեց: Այս գործընթացներն իշխանությունները պայմանավորեցին մեծամասամբ «անվտանգության» նկատառումներով: Ինչպես վկայում են Սիվիլիթաս հիմնադրամի [նախորդ հարցման](#) արդյունքները, բնակչության մեծ մասի հիմնավորումները՝ միանալու Մաքսային Միությանը (այնուհետև՝ Եվրասիական տնտեսական միությանը), նույնպես ավելի շուտ ելնում են «անվտանգությունից», քան պայմանավորված են տնտեսական գործոններով:

Այդուհանդերձ, հարց է, թե որքանով է համապատասխանում «անվտանգություն» կամ «ազգային անվտանգություն» հասկացության հանրային ընկալումը Հայաստանի Հանրապետության «Ազգային անվտանգության ռազմավարությունում» իշխանությունների ձևակերպած կոնցեպտուալ շրջանակին: Դրանից բխում է նաև այն հարցը, թե որքանով են ազգային անվտանգության հանրային ակնկալիքները համապատասխանում Հայաստանում օտարերկրյա ռազմական զորամիավորումներ տեղակայելու՝ ներկայիս քաղաքականության հետ: Ճշտման ենթակա է ոչ միայն հանրության հանդուժելիության մակարդակը կոնկրետ որևէ երկրի ռազմական զորամիավորումներ տեղակայելու նկատմամբ, այլև ռազմական զորամիավորումների՝ ընդհանրապես: Այդ իմաստով, արժե ուսումնասիրել, թե Հայաստանի հանրությունն ի՞նչ պայմաններով է համաձայն իր տարածքը տրամադրել օտարերկրյա ռազմական զորամիավորումներին, և արդյո՞ք այդ պայմանները համընկնում են նրա ձևակերպած «ազգային անվտանգություն» ապահովելու անհրաժեշտության հետ:

Հարցման նպատակները

Վերը նշված հարցերը վեր հանելու նպատակով Սիվիլիթաս հիմնադրամը 2015թ. մարտին Հայաստանի բոլոր մարզերի և Երևանի բնակչության շրջանում անցկացրեց հեռախոսային հարցում, որին մասնակցեց ավելի քան 600 բնակիչ: Հարցման նպատակն էր՝ պարզել Հայաստանի բնակչության վերաբերմունքը օտարերկրյա ռազմական զորամիավորումների ներկայության նկատմամբ, վեր հանել այդ վերաբերմունքը պայմանավորող գործոնները, համադրել այդ վերաբերմունքը ազգային անվտանգության՝ նրանց պատկերացումների հետ և, վերջապես, համադրել այդ պատկերացումներն ազգային անվտանգության՝ իշխանությունների կողմից ձևակերպված հայեցակարգային սահմանումների հետ:

Հարցումն ու դրա արդյունքների վերլուծությունն իր առջև նպատակ չի դրել քննել ազգային անվտանգության ռազմավարության բուն փաստաթուղթը (հաստատված

2007թ.), դրա այժմեականությունը, կիրարկման կարգավիճակը, դրանում ամրագրված ներքին ու արտաքին սպառնալիքները և հանրային կարծիքը դրանց մասին, թեև սրանք նույնպես հարցեր են, որոնք արժանի են խորը վերլուծության:

Հարցման արդյունքների վերլուծությունը ներկայացված է հետևյալ հերթականությամբ՝

- Ազգային անվտանգության պետական ռազմավարության մեջ ամրագրված հասկացությունների համադրությունը հանրային պատկերացումների հետ, հանրության կարծիքը, թե որ կառույցներն են պատասխանատու ազգային անվտանգության ապահովման համար
- Օտարերկրյա ռազմական զորամիավորումների և, մասնավորապես, ռուսաստանյան զորամիավորումների ներկայության նկատմամբ հանրային վերաբերմունքն ու ակնկալիքները:

Հարցման մեթոդաբանությունը, ինչպես նաև հարցաշարն ու հավելյալ տվյալները ներկայացված են զեկույցի վերջում:

Ազգային անվտանգություն

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը (այսուհետ՝ ազգային անվտանգության ռազմավարություն), շուրջ երկու տարի միջգերատեսչական հանձնաժողովի կողմից մշակվելուց հետո, հաստատվել է 2007թ. փետրվարի 7-ին՝ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ՆՀ-37-Ն հրամանագրով, որից հետո մինչ այժմ փոփոխության չի ենթարկվել:

Մասնագիտական գրականությունում ընդունված է ազգային անվտանգության հայեցակարգը կամ ռազմավարությունը համարել պետությունում սահմանադրությունից հետո երկրորդ կարևորագույն ուղեցուցային փաստաթուղթը (Մինասյան, 2006)¹:

«Հ ազգային անվտանգության ռազմավարության եզրափակիչ դրույթները սահմանում են, որ դրա հիմնադրույթները «կենսագործվում են Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական, ռազմական, տնտեսական, պարենային, էներգետիկ, բնապահպանական, հաղորդակցական և տեղեկատվական անվտանգության, ժողովրդագրական, գիտակրթական, հոգևոր-մշակութային զարգացումների հայեցակարգերի և դրանցից բխող նպատակային ծրագրերի հիման վրա» (ՀՀ ԱԱՌ, 2007)², այսինքն՝ այն ուղեցույց է ոլորտային ռազմավարությունների կամ հայեցակարգերի մշակման համար:

Ազգային անվտանգության ռազմավարությունը բաղկացած է ներածական՝ կոնցեպտուալ հիմնադրույթներից և հետևյալ չորս բաժնից՝

1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքները, անվտանգության ապահովման գործոններն ու գործողությունները, դրանց դեմ ուղղված սպառնալիքները,
2. ներքին անվտանգության ռազմավարությունը,
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն,
4. արտաքին անվտանգության ռազմավարությունը:

Ազգային անվտանգության ռազմավարությունը սահմանվում է որպես «պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգ», որի իրականացման համար շեշտադրվում է «ժողովրդավարական արժեքների համակարգի» հիման վրա՝ պետական քաղաքականության մշակումը կենսագործունեության բոլոր ոլորտների համար (ՀՀ ԱԱՌ, 2007): Ռազմավարության երաշխիքների թվարկումն առավել ցցուն է դարձնում դրա բնույթը՝ որպես ոչ թե

¹ Սերգեյ Մինասյան (2006), Ազգային անվտանգության հայեցակարգի ընդունման համաշխարհային փորձը, «21-րդ դար», թիվ 3 (13), 2006թ.

² Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն (2007). <http://www.irtek.am/views/act.aspx?aid=38022&m=%27%27&sc=#>, վերջին այցելությունը՝ 21.05.2015

ավանդական մոտեցում՝ հիմնված ռազմական և արտաքին անվտանգության վրա, այլ անձի, հասարակության և պետության եռամիասնական և հավասարակշռված անվտանգության ապահովման համակարգ: Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության իրականացման երաշխիքներն են՝

- պետական կառավարման համակարգի արդյունավետությունը,
- իրավունքի գերակայության ապահովումը,
- ժողովրդավարական արժեքների արմատավորումը,
- դատական իշխանության անաչառությունն ու անկախությունը,
- զինված ուժերի մարտունակությունը,
- անվտանգության և իրավապահ մարմինների արդյունավետ գործունեությունը,
- արդյունավետ միջազգային ներգրավվածությունն ապահովող արտաքին քաղաքականությունը,
- սոցիալական արդարության ապահովումը:

Ազգային անվտանգության ռազմավարությունը հստակորեն առանձնացնում է ներքին և արտաքին անվտանգության ոլորտները՝ սպառնալիքների շարքում թվարկելով պետական կառավարման անարդյունավետությունը ու մարդու իրավունքների պաշտպանության ոչ լիարժեք համակարգը, դատական իշխանությունների նկատմամբ ցածր վստահությունը, քաղաքական կուսակցությունների կայացվածության ոչ բավարար մակարդակը, հասարակության սոցիալական բևեռացումը, բնապահպանական խնդիրներն ու պաշարների ոչ խելամիտ օգտագործումը, ինչպես նաև ղարաբաղյան հակամարտության չլուծված լինելը, էներգետիկ կախվածությունը, տարածաշրջանային տնտեսական ծրագրերից մեկուսացված լինելը և այլն:

Ազգային անվտանգության մասին հանրային պատկերացումը

Ընդհանուր առմամբ, Հայաստանի բնակչությունն ազգային անվտանգության մասին ավելի նեղ պատկերացում ունի, քան պետական ռազմավարության մեջ ամրագրված՝ ազգային անվտանգությունը սահմանող արժեքները:

Հանրության շրջանում ազգային անվտանգության պատկերացումը վեր հանելու նպատակով Սիվիլիթաս հիմնադրամը նախ հարցվողներից ճշտել է, թե նրանք իրենց բառերով ինչպե՞ս կբնութագրեն ազգային անվտանգությունը, այնուհետև տարբերակների թվարկման կարգով պարզել, թե հարցվողները ազգային անվտանգության մաս համարո՞ւմ են արդյոք պետական ռազմավարության մեջ ամրագրված՝ ազգային անվտանգության հետևյալ արժեքները.


- անկախությունն ու ինքնիշխանությունը,
- պետության և ժողովրդի պաշտպանվածությունը՝ տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը, բնակչության ֆիզիկական գոյությունը,
- խաղաղությունը և միջազգային համագործակցությունը,

- հայապահպանությունը՝ հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանումը,
- բարեկեցությունը՝ [կենսա]կայուն զարգացման միջոցով կյանքի բարձր որակի ապահովումը:

Ի տարբերություն սրանց՝ Հայաստանի բնակչության կեսն ազգային անվտանգությունը սեփական բառերով սահմանում է որպես երկրի ու ժողովրդի պաշտպանություն, 21 տոկոսն ազգային անվտանգություն ասելով հասկանում է բանակն ու արտաքին անվտանգությունը:

Հետաքրքրական է, որ հաճախ հարցվողներն ազգային անվտանգությունը որպես հասկացություն նույնացրել են պետական կառույցի հետ՝ հիմնականում հիշատակելով Ազգային անվտանգության ծառայությունը իր ներկայիս և խորհրդային ռուսալեզու անվանումներով (КГБ) և ոստիկանությունը: Հատկանշական է նաև, որ անվտանգության գերազանցապես ավանդական ընկալում ցուցանող պատասխանների կողքին հնչել են նաև անհատի իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության մասին սահմանումներ:


Գրաֆիկ 1. Բնակչության պատկերացումները ազգային անվտանգության մասին³



³ Այստեղ և այսուհետ, եթե հարցն ունեցել է մեկից ավելի պատասխանի հնարավորություն, տոկոսների հանրագումարը տարբերվում է հարյուրից: Բոլոր այն դեպքերում, երբ կա մեկ պատասխանի հնարավորություն, տարբերակների հանրագումարի՝ 100 տոկոսից շեղումը կլորացման արդյունք է:


Այն դեպքում, երբ հեռախոսային հարցման ժամանակ թվարկվել են ազգային անվտանգության ռազմավարության հիմնարար արժեքները, բոլոր տարբերակներն ընդունել է հարցվողների 25 տոկոսը, իսկ մեծ մասը (75 տոկոս) նշել է, որ ազգային անվտանգության մաս է խաղաղությունը: Հարցված կանանց 80 տոկոսն ընդգծել է, որ ազգային անվտանգության մաս է կազմում խաղաղությունը՝ ի տարբերություն նույն կերպ մտածող տղամարդկանց 68 տոկոսի (հարցի պատասխանները՝ ըստ սեռի կարելի է տեսնել Հավելված 2-ի Աղյուսակ 4-ում):

Գրաֆիկ 2. Բնակչության կարծիքը ազգային անվտանգության բաղադրիչների մասին



Հարցին, թե Հայաստանի ազգային անվտանգության ապահովմամբ որ կառույցը կամ կառույցները պետք է զբաղվեն, ամենաշատը նշվել է ոստիկանությունը (29 տոկոս), Ազգային անվտանգության ծառայությունը (26 տոկոս), Պաշտպանության նախարարությունը (25 տոկոս): Ժողովրդի՝ բոլորիս լիազորության և պատասխանատվության մասին նշել է բնակչության շուրջ 10 տոկոսը: Բնակչության ընդամենը 0.7 տոկոսն է նշել, որ ազգային անվտանգության ապահովմամբ պետք է զբաղվի Արտաքին գործերի նախարարությունը: Ստորև բերված Գրաֆիկ 3-ում պատասխաններն ամփոփվել են ըստ ոլորտների, իսկ առավել մանրամասն հնչած տարբերակներին կարելի է ծանոթանալ Հավելված 2-ի Աղյուսակ 5-ում, որտեղ դրանք ներկայացված են ըստ սեռի:


Գրաֆիկ 3. Բնակչության կարծիքը, թե որ կառույցը/ներն են լիազոր զբաղվելու ազգային անվտանգության ապահովմամբ



Հեռախոսային հարցման ամենահիշարժան արդյունքներից մեկն այն է, որ Հայաստանի բնակչության գերակշռող մեծամասնության համար (81 տոկոս) ընդունելի չէ, որ երկրի ազգային անվտանգության ապահովմամբ զբաղվի այլ պետություն և/կամ միջազգային կառույց:

Հայաստանի ազգային անվտանգության ապահովումն այլ պետությանը և/կամ միջազգային կառույցին վստահած բնակչության մեծ մասը որպես այդպիսի երկիր կամ կառույց նշել է Ռուսաստան (68 տոկոս), հնչել են նաև Ֆրանսիա (7 տոկոս), ԵՄ (10 տոկոս), ԱՄՆ (4 տոկոս), Գերմանիա և ՄԱԿ (2-ական տոկոս) տարբերակները, 29 տոկոսը չի կարողացել նշել որևէ երկիր կամ կառույց: Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ), Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ), ինչպես նաև ՆԱՏՕ-ի մասին ոչ ոք չի նշել: Ընդ որում նշանակալի տոկոս չեն կազմում, բայց կան նաև պատասխաններ, երբ չի նշվել որևէ կոնկրետ պետություն/կառույց, բայց կարևորվել է, օրինակ, որ այն լինի եվրոպական/զարգացած/ժողովրդավար որևէ պետություն կամ կառույց:

Գրաֆիկ 4. Բնակչության կարծիքը Հայաստանի ազգային անվտանգությունն ապահովելու հարցում օտարերկրյա պետության/կառույցի մասնակցության մասին




Հարցման մասնակիցներից, ովքեր նշել են, որ Հայաստանի ազգային անվտանգության ապահովմամբ կարող է այլ պետություն կամ կառույց զբաղվել, խնդրել ենք պարզաբանել, թե ինչպե՞ս են նրանք դա պատկերացնում: Մասնակիցները Ռուսաստանից հստակ ակնկալում են ուղղակի միջամտություն՝ ռազմական օգնություն և սահմանների պաշտպանություն, իսկ այլ երկրների դեպքում պատասխանների մեջ սահմանների պաշտպանությունը շատ քիչ է հիշատակվել, շեշտադրվել է, սակայն, համաձայնեցված համագործակցությունն ու անշահախնդրությունը:

Բաց հարցին տրված այս պատասխանները հուշում են, որ Հայաստանի բնակչությունն ավելի շուտ ակնկալում է միակողմանի և անվարձահատույց մասնակցություն, ասենք՝ նշվում է «զինամթերքի տրամադրում», ոչ թե՛ «վաճառք», «սահմանների պաշտպանություն», ոչ թե՛ «աջակցություն սահմանապահ գործունեությանը», «աշխատանքային միգրացիայի հարցում արգելքների վերացում» և այլն:


Հետաքրքրական է, որ ինչպես չէր նշվել ՀԱՊԿ-ի՝ որպես անվտանգությամբ զբաղվող կառույցի մասին, այնպես էլ՝ անվտանգության հավաքական գործողությունների գաղափարի կրողները բնակչության շրջանում քչաթիվ են:

Գրաֆիկ 5. Բնակչության կարծիքը, թե ինչպես կարող Ռուսաստանը զբաղվել Հայաստանի ազգային անվտանգության ապահովմամբ



Այլ պետությունների մասնակցության ձևի մասին ավելի քիչ մարդ է կարծիք արտահայտել: Հարցման բաց հարցերին պատասխաններ ընդհանուր առմամբ միշտ չէ, որ տրվել են, իսկ, մասնավորապես, Ռուսաստանի և այլ պետությունների/կառույցների կողմից Հայաստանի ազգային անվտանգությամբ զբաղվելու տվյալների քանակական բնութագրիչներին պետք է մոտենալ որոշակի վերապահումով, քանզի դրանք հնչել են բնակչության փոքր տոկոսի կողմից: Փոխարենը՝ հետաքրքիր են որակական բնութագրիչները:

Գրաֆիկ 6. Բնակչության կարծիքը, թե ինչպես կարող են այլ պետություններ (բացի Ռուսաստանից) և/կամ կառույցներ զբաղվել Հայաստանի ազգային անվտանգության ապահովմամբ




Օտարերկրյա ռազմական զորամիավորումների ներկայություն

Սիվիլիթաս հիմնադրամի հեռախոսային հարցման մեջ ներառվել են նաև հարցեր՝ պարզելու, թե որքանով է Հայաստանի բնակչությունը հանդուրժող օտարերկրյա ռազմական զորամիավորումների ներկայությանը Հայաստանում, որքանով դրանք կարող են նպաստել երկրի ազգային անվտանգության ապահովմանը, և ինչ պայմաններում է բնակչությունը պատրաստ իր երկրի տարածքը տրամադրել օտարերկրյա զորամիավորումներին:


Բնակչության 55 տոկոսն ընդունելի է համարում Հայաստանում այլ պետության կամ կառույցի ռազմական բազայի ներկայությունը:

Գրաֆիկ 7. Բնակչության վերաբերմունքը օտարերկրյա ռազմական զորամիավորումների ներկայությանն ընդհանրապես




Հայաստանի բնակչության կեսը կարծում է, որ ընդհանուր առմամբ, որևէ օտար պետության կամ կառույցի ռազմական բազաների ներկայությունը Հայաստանում նպաստավոր է երկրի ազգային անվտանգության ապահովման համար, 21 տոկոսն էլ կարծում է, որ բազաների ներկայությունը խոչընդոտող է Հայաստանի ազգային անվտանգության ապահովմանը: Հետաքրքրական է, որ նույն հարցման շրջանակներում բնակչության ճնշող մեծամասնությունն անընդունելի էր համարել, որ Հայաստանի ազգային անվտանգությամբ զբաղվի այլ պետություն կամ կառույց:

Գրաֆիկ 8. Հայաստանի ազգային անվտանգության վիճակը՝ կախված օտարերկրյա ռազմաբազաների ներկայությունից




Մարդկանց, որ ասել են, թե ընդունելի են համարում Հայաստանում այլ պետության կամ կառույցի ռազմական բազայի ներկայությունը, նաև հարց է տրվել, թե ինչ պայմանով պետք է լինի այդ ներկայությունը: Ընդունելի համարողների 38 տոկոսը կարծում է, որ պայմանը Հայաստանի բնակչությանը Թուրքիայի ու Ադրբեջանի զինված հարձակումից պաշտպանելն է, ընդ որում՝ Թուրքիայից պաշտպանել պատասխանողների թիվը փոքր-ինչ ավելի մեծ է Ադրբեջանից պաշտպանել պատասխանողներից (համապատասխանաբար 21 տոկոս և 17 տոկոս): Այս հարցի շուրջ չի կողմնորոշվել բնակչության 18 տոկոսը:

Գրաֆիկ 9. Հայաստանցիների ակնկալիքները որևէ պետության կամ կառույցի ռազմաբազայի ներկայությունից




Նույնատիպ հարցեր տրվել են մասնավորապես Ռուսաստանի՝ Հայաստանում գտնվող զորամիավորումների հետ կապված: Ըստ հարցման արդյունքների վերծանման՝ բնակչության մեծ մասը կարծում է, որ Ռուսաստանի ռազմական զորամիավորումների ներկայությունը Հայաստանում մեծ չափով (26 տոկոս) կամ որոշ չափով (43 տոկոս) նպաստում է Հայաստանի ազգային անվտանգության ապահովմանը:

Գրաֆիկ 10. Հայաստանի ազգային անվտանգության վիճակը՝ կախված ռուսաստանյան ռազմաբազաների ներկայությունից




Մարդկանցից, որոնք նշել են, որ իրենց համար ընդունելի չէ, որ Հայաստանի ազգային անվտանգության ապահովմամբ զբաղվի որևէ այլ պետություն և/կամ միջազգային կառույց, գերակշռող մեծամասնությունը (73 տոկոս) նշել է, որ Ռուսաստանի ռազմական զորամիավորումների ներկայությունը նպաստում է Հայաստանի ազգային անվտանգության ապահովմանը, այսինքն՝ Ռուսաստանի դեպքում նկատելի է արմատացած վերաբերմունք:

Գրաֆիկ 11. Վերաբերմունքն այլ պետությունների մասնակցությանը Հայաստանի ազգային անվտանգության ապահովմանը և Ռուսաստանի զորամիավորումների ներկայությանը Հայաստանում



Ինչպես որևէ երկրի ռազմական զորամիավորումների ներկայության դեպքում, այնպես էլ ռուսական ռազմական զորամիավորումների դեպքում՝ հայաստանցիների ակնկալիքը դրանց ներկայությունից կրկին պաշտպանությունն է Թուրքիայի և/կամ Ադրբեջանի զինված հարձակումից: Այս դեպքում նույնպես՝ Թուրքիայի զինված հարձակումից պաշտպանություն նշել է բնակչության ավելի մեծ մասը (24 տոկոս), քան պաշտպանություն Ադրբեջանի զինված հարձակումից (16 տոկոս):

Գրաֆիկ 12. Հայաստանցիների ակնկալիքները ռուսական ռազմական զորամիավորումներից



Բացի ակնկալիքներից՝ հարցման ընթացքում տրվել են հարցեր, թե որոնք են օգուտներն ու վնասները ռուսական ռազմական զորամիավորումներից: Բնակչության մեծ մասը համարում է, որ այս պահին ռուսական զորամիավորումները պաշտպանում են Հայաստանի բնակչությանը Թուրքիայի և/կամ Ադրբեջանի զինված հարձակումից: Հայաստանցիների չնչին մասն (1 տոկոս) այն կարծիքին է, որ այդ զորամիավորումները նաև պաշտպանում են Արցախի բնակչությանը Ադրբեջանի զինված հարձակումից:

Արցախի բնակչության պաշտպանության հետ կապված ակնկալիքները ակնհայտորեն հակասում են նույնիսկ ՀԱՊԿ շրջանակներում պայմանագրային պարտավորություններին և փոխադարձ համաձայնություններին, քանի որ Հավաքական

անվտանգության մասին պայմանագիրը հստակ գործում է անդամ պետությունների դեպքում, իսկ Արցախը՝ որպես առանձին միավոր համաձայնագրի անդամ չէ և պաշտոնապես չի հանդիսանում Հայաստանի մաս, ուստի Արցախի դեպքում այն չի էլ կարող գործել:

Բացի զինված հարձակումից պաշտպանելուց՝ բնակչության 10 տոկոսն էլ համարում է, որ այդ զորամիավորումներն ապահովում են բնակչության անվտանգությունը, ևս շուրջ 10 տոկոսը համարում է, որ Հայաստանը զորամիավորումներից ռազմական օգնություն է ստանում, իսկ մի ստվար զանգված էլ (22 տոկոսը) չգիտի, թե ինչ օգուտ են տալիս Հայաստանում գտնվող ռուսաստանյան ռազմական զորամիավորումները:

Գրաֆիկ 13. Հայաստանում գտնվող ռուսական ռազմական զորամիավորումների ամենամեծ օգուտը




Ինչպես ցույց է տվել 2014թ. հունիսին Սիվիլիթաս հիմնադրամի անցկացրած հարցումը՝ Հայաստանի արտաքին քաղաքականության ուղղության վերաբերյալ, հայաստանցիների 60 տոկոսը նշել էր, որ Մաքսային միությանը (Եվրասիական տնտեսական միությանը) անդամակցելը Հայաստանի բնակչության համար ընդհանուր առմամբ լավ է: Միության օգուտներից ամենաշատը նշվել էր ռազմական

անվտանգությունն ու խաղաղությունը (13 տոկոս), իսկ վնասներից՝ ինքնիշխանության վտանգումն ու Ռուսաստանից կախվածությունը (16 տոկոս):


Հայաստանի բնակչության զգալի մասը (41 տոկոս) որևէ վնաս չի տեսնում ռուսաստանյան ռազմական զորամիավորումների ներկայությունից Հայաստանում: Ինչպես Մաքսային Միությանը միանալու դեպքում՝ ռազմական զորամիավորումների դեպքում նույնպես՝ բնակչության կողմից նշված վնասներից ամենամեծ մասը կազմում են ինքնիշխանության կորուստը և սպառնալիքները խաղաղ բնակչության համար (7-ական տոկոս): Մարդկանց 6 տոկոսն էլ Ռուսաստանի ռազմական զորամիավորումների ներկայության ամենամեծ վնասը համարել է Գյումրիի դեպքերը՝ նկատի ունենալով զորամիավորումներում ծառայողների կողմից խաղաղ բնակչությանը հասցված վնասները, ընդ որում՝ Շիրակի մարզի բնակչությունը չի ցուցաբերել ընդգծված զգայունություն այդ հարցի նկատմամբ (պատասխաններն ըստ մարզերի՝ տես Հավելված 2-ի Աղյուսակ 10-ում):

Գրաֆիկ 14. Ռուսական ռազմական զորամիավորումների ամենամեծ վնասը



Հարցման ընթացքում նաև փորձ է արվել պարզել բնակչության կարծիքը, թե արդյո՞ք Եվրասիական տնտեսական միությանը չմիանալը կարող էր վտանգել Արցախի փաստացի անկախությունը: Թեև հայաստանցիների 26 տոկոսն այս հարցում չի կարողացել կողմնորոշվել՝ հարցման արդյունքները վկայում են, որ Հայաստանի բնակչության կեսից ավելին կարծում է, որ Եվրասիական տնտեսական միությանը չմիանալու դեպքում Արցախի փաստացի անկախությունը վտանգված չէր լինի:

Գրաֆիկ 15. Բնակչության կարծիքը Եվրասիական տնտեսական միությանը միանալու և Արցախում իրավիճակի միջև կապի մասին



Հավելված 1. Մեթոդաբանություն

Հեռախոսային հարցումն իրականացվել է 2015թ. մարտի 27-ից 30-ը Հայաստանի բոլոր մարզերից և Երևանից պատահականորեն ընտրված ֆիքսված հեռախոսահամար ունեցող ավելի քան 600 բնակչի շրջանում: Հաշվի առնելով Սիվիլիթասի իրականացրած նախորդ հարցումների փորձը՝ հրաժարումները հարցազրույցից, հեռախոսահամարների անհասանելիությունը կամ ոչ ճշգրիտ լինելը, հեռախոսահամարի՝ տնային տնտեսությանն ամրակցված չլինելը և այլ պատճառներ, ընտրանքը ներառել է 1800 հեռախոսահամար:

Հետազոտությունում կիրառվել է շերտավորված պատահական (հավանականային) ընտրանք: Նախ՝ տնային տնտեսությունների ֆիքսված հեռախոսահամարները խմբավորվել են ստրատաներում (ըստ մարզ/գյուղ/քաղաք հայտանիշի), այնուհետև յուրաքանչյուր ստրատայից ընտրվել են պատահական հեռախոսահամարներ, ապա՝ յուրաքանչյուր հեռախոսահամարի տնային տնտեսությունից պատահականության սկզբունքով ընտրվել է հարցվողը (այն չափահաս անդամը, որի ծննդյան օրը հաջորդ ամենամոտն է հարցման օրվան): Տվյալ հարցվողի բացակայության դեպքում ընտրվել է ծննդյան օրով SS հաջորդ ամենամոտ անդամը: Եթե այդ անդամն էլ բացակայել է տնից, ապա իրականացվել են հետզանգեր՝ նշված նույն հաջորդականությամբ տնային տնտեսության անդամի ընտրության համար:

Հետազոտությունում որպես գլխավոր համախմբություն հանդես է եկել ֆիքսված հեռախոս ունեցող տնային տնտեսությունների բազմությունը:

Հարցման սխալի չափը չի գերազանցում չորս տոկոսը՝ 95 տոկոս վստահության միջակայքով: Հաջողված հարցազրույցների թիվը 644 է: Հետազոտության արդյունքներն ընդհանրացնելու նպատակով կատարվել է տվյալների կշռում, որի համար կատարվել են հետևյալ քայլերը.

- Հաշվարկվել է հեռախոսահամարի կշիռը ստրատայում: Սա ցույց է տալիս, թե տվյալ ստրատայից պատահականորեն ընտրված մեկ օգտագործված հեռախոսահամարը միջինում նույն ստրատայից քանի հեռախոսահամար է ներկայացնում,
- Կատարվել է պատասխանների հաճախության հաշվարկ: Այս գործակիցը ցույց է տալիս, թե տվյալ ստրատայում յուրաքանչյուր կայացած հարցազրույց միջինը քանի ոչ փակ տնային տնտեսություն է ներկայացնում:
- Հաշվարկվել է ռեսպոնդենտի կշիռը տնային տնտեսությունում: Այն ցույց է տալիս, թե հարցվող ռեսպոնդենտը տվյալ տնային տնտեսության քանի չափահաս անդամի է ներկայացնում:
- Կշռման ընթացքում շտկվել է նաև բնակչության սեռատարիքային կազմի համամասնությունը:

Հարցաշարը կազմել է Սիվիլիթաս հիմնադրամը, այն վերանայել են միջազգային փորձագետները: Հարցաշարն ընդգրկել է 14 վերաբերմունքային և 5 բնութագրող հարց, հաջողված հարցման միջին տևողությունը կազմել է 18 րոպե: Զանգերի որակի վերահսկողության նպատակով համակարգի միջոցով զանգերն ընտրողաբար ձայնագրվել են, հարցման անցկացման որակի ստուգման փուլում զանգերի 10 տոկոսի ձայնագրությունները ստուգվել են:

Հավելված 2. Լրացուցիչ արդյունքներ

Աղյուսակ 1. Հարցվածներն ըստ սեռի և բնակության վայրի

	Քաղաք	Գյուղ
Արական	22.8%	35.0%
Իգական	77.2%	65.0%

Աղյուսակ 2. Հարցվածներն ըստ կրթության և բնակության վայրի

	Քաղաք	Գյուղ
Միջնակարգ	26.1%	50.9%
Միջին մասնագիտական	29.9%	24.6%
Բարձրագույն	44.0%	24.5%

Աղյուսակ 3. Հարցվածներն ըստ տարիքային խմբերի և բնակության վայրի

	Քաղաք	Գյուղ
18-30 տարեկան	23.0%	21.3%
31-45 տարեկան	28.2%	23.0%
46-60 տարեկան	26.9%	30.6%
61+ տարեկան	21.9%	25.1%

Աղյուսակ 4. Բնակչության կարծիքը ազգային անվտանգության բաղադրիչների մասին՝ ըստ սեռի

	Իգական	Արական
Կյանքի բարձր որակ	31%	38%
Ժողովրդավարական արժեքներ	30%	40%
Բնակչության ֆիզիկական գոյություն	37%	46%
Երկրի անկախություն և ինքնիշխանություն	39%	50%
Ազգային ինքնության պահպանում	41%	51%
Տարածքային ամբողջականություն	39%	56%
Խաղաղություն	80%	68%

Աղյուսակ 5. Բնակչության կարծիքը, թե որ կառույցը/ներն են լիազոր զբաղվելու ազգային անվտանգության ապահովմամբ

Ձեր կարծիքով՝ Հայաստանի ազգային անվտանգության ապահովմամբ ո՞ր կառույցը կամ կառույցները պետք է զբաղվեն		
	Արական	Իգական
Ազգային անվտանգության ծառայությունը	32%	20%
Պաշտպանության նախարարությունը	28%	23%
Ոստիկանությունը	28%	30%
Նախագահը	11%	12%
Ժողովուրդը, բոլորս	9%	9%
Կառավարությունը	8%	20%
Ազգային անվտանգության խորհուրդը	6%	5%
Ազգային ժողովը	6%	5%
Պետական բոլոր կառույցները	5%	7%
Արտակարգ իրավիճակների և տարածքային կառավարման նախարարությունը	2.6%	0.5%
Դատական համակարգը	2.4%	1.7%
Այլ նախարարություններ	2.3%	0.1%
Կրթության և գիտության նախարարությունը	1.9%	0.6%
Իշխանությունները	1.6%	1.0%
Առողջապահության նախարարությունը	0.7%	1.4%
Արտաքին գործերի նախարարությունը	0.6%	0.7%
Դատախազությունը	0.2%	0.0%
Ոչ ոք	0.2%	0.3%
Բնապահպանության նախարարությունը	0.0%	0.4%
Միջպետական կառույցներ	0.0%	0.1%
Միջազգային կազմակերպություններ	0.0%	0.3%
Հասարակական կազմակերպություններ	0.0%	0.7%
Խելացի և կարող մարդիկ	0.0%	0.2%

Աղյուսակ 6. Բնակչության կարծիքը Հայաստանի ազգային անվտանգությունն ապահովելու հարցում օտարերկրյա պետության/կառույցի մասնակցության մասին՝ ըստ կրթության

Ձեզ համար ընդունելի՞ է, թե՞ ընդունելի չէ, որ Հայաստանի ազգային անվտանգության ապահովմամբ զբաղվի որևէ այլ պետություն և/կամ միջազգային կառույց			
	Միջնակարգ	Միջին մասնագիտական	Բարձրագույն
Ընդունելի է	15%	23%	16%
Ընդունելի չէ	84%	76%	83%
ՉԳ/ՀՊ	2%	2%	2%

Աղյուսակ 7. Բնակչության վերաբերմունքն այլ պետությունների մասնակցությանը Հայաստանի ազգային անվտանգության ապահովմանը և օտար պետության կամ կառույցի զորամիավորումների ներկայությանը Հայաստանում

Ձեր կարծիքով, որևէ օտար պետության կամ կառույցի ռազմական բազաների ներկայությունը Հայաստանում նպաստավո՞ր է, թե՞ խոչընդոտող է Հայաստանի ազգային անվտանգության ապահովմանը	Ձեզ համար ընդունելի՞ է, թե՞ ընդունելի չէ, որ Հայաստանի ազգային անվտանգության ապահովմամբ զբաղվի որևէ այլ պետություն և/կամ միջազգային կառույց	
	Ընդունելի է	Ընդունելի չէ
Նպաստավոր է	56%	51%
Եվ նպաստավոր է, և խոչընդոտող	2%	8%
Ոչ նպաստող է, ոչ խոչընդոտող	2%	4%
Խոչընդոտող է	25%	20%
Կախված է պետությունից/կառույցից	6%	6%
Կախված է պայմանավորվածությունից	5%	1%
Կախված է պետությունից/ կառույցից և պայմանավորվածությունից	0%	3%
ՉԳ/ՀՊ	4%	6%

Աղյուսակ 10. Հարցվածներն ըստ մարզի և ըստ պատասխանի, համաձայն որի՝ Հայաստանում Ռուսաստանի ռազմական գործախաղերումների ներկայությունից ամենամեծ վտանգը Գյումրիի դեպքերն են

Արագածոտն	5%
Արարատ	1%
Արմավիր	4%
Գեղարքունիք	6%
Կոտայք	3%
Լոռի	15%
Շիրակ	5%
Սյունիք	1%
Տավուշ	7%
Վայոց ձոր	4%
Երևան	7%
Հայաստան	6%

Հավելված 3. Հարցաշար

1. Ազգային անվտանգության մասին հաճախ է խոսվում, ձեր բառերով ինչպե՞ս կրնու՞թազրեք *ազգային անվտանգությունը*: [ԳՐԱՆՑԵԼ ԱՌԱՋԻՆԸ ՆՇԱԾ ՄԻՆՉԵՎ ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆԸ]

- -----[ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ]
- -----[ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ]
- -----[ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ]
- չգիտեմ
- հրաժարվում եմ պատասխանել

2. Հիմա կնշեմ մի շարք հասկացություններ: Սրանցից ո՞րը/որո՞նք են *ազգային անվտանգության* մաս [ԿԱՐԴԱԼ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ԳՐԱՆՑԵԼ ԲՈԼՈՐ ՀՆՉԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ, ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ՀԻՇԵՑՆԵԼ՝ ՀԱԿԱՌԱԿ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԴԱԼՈՎ]

- կյանքի բարձր որակ
- բնակչության ֆիզիկական գոյություն
- ժողովրդավարական արժեքներ
- ազգային ինքնության պահպանում
- երկրի անկախություն և ինքնիշխանություն
- տարածքային ամբողջականություն
- խաղաղություն
- այլ [ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ] _____
- չգիտեմ
- հրաժարվում եմ պատասխանել

3. Ձեր կարծիքով՝ Հայաստանի *ազգային անվտանգության* ապահովմամբ ո՞ր կառույցը/կառույցները պետք է զբաղվի/զբաղվեն: [ՆՇԵԼ ԲՈԼՈՐ ՀՆՉԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ]

- [ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ] _____
- չգիտեմ
- հրաժարվում եմ պատասխանել

4. Ձեզ համար ընդունելի՞ է, թե՞ ընդունելի չէ, որ Հայաստանի *ազգային անվտանգության* ապահովմամբ զբաղվի որևէ այլ պետություն և/կամ միջազգային կառույց: [ԶԿԱՐԴԱԼ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ԵԹԵ ՊԱՏԱՍԽԱՆԸ «ԸՆԴՈՒՆԵԼԻ Է» ՉԷ, ԱՆՑՆԵԼ ՀԱՐՑ 7-ԻՆ]

- ընդունելի է
- ընդունելի չէ
- չգիտեմ

- հրաժարվում եմ պատասխանել
5. [Եթե 4-ի ՊԱՏԱՍԽԱՆՆԷ «ԸՆԴՈՒՆԵԼԻ Է», ԱՊԱ ՀԱՐՑՆԵԼ՝ Ո՞ր պետությունը և/կամ կառույցը: [ԳՐԱՆՑԵԼ ԲՈԼՈՐ ՀՆՉԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ]
- [ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ] _____
 - չգիտեմ
 - հրաժարվում եմ պատասխանել
6. [Եթե 4-ի ՊԱՏԱՍԽԱՆՆ Է «ԸՆԴՈՒՆԵԼԻ Է», ԱՊԱ ՀԱՐՑՆԵԼ՝ Ինչպե՞ս
- [ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ] _____
 - չգիտեմ
 - հրաժարվում եմ պատասխանել
7. Ձեր կարծիքով՝ ընդհանուր առմամբ, որևէ օտար պետության կամ կառույցի ռազմական բազաների ներկայությունը Հայաստանում նպաստավոր է, թե՞ խոչընդոտող է Հայաստանի ազգային անվտանգության ապահովմանը [ԳՐԱՆՑԵԼ ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ]:
- [ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ] _____
 - չգիտեմ
 - հրաժարվում եմ պատասխանել
8. Արդյոք ընդունելի՞, թե՞ անընդունելի եք համարում Հայաստանում այլ պետության կամ կառույցի ռազմական բազայի ներկայությունը [ԶԿԱՐԴԱԼ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ԵԹԵ ՊԱՏԱՍԽԱՆԸ «ԸՆԴՈՒՆԵԼԻ» ՉԷ՝ ԱՆՑՆԵԼ ՀԱՐՑ 10-ԻՆ]
- ընդունելի
 - անընդունելի
 - չգիտեմ
 - հրաժարվում եմ պատասխանել
9. [Եթե 8-ի ՊԱՏԱՍԽԱՆՆ Է «ԸՆԴՈՒՆԵԼԻ Է», ԱՊԱ ՀԱՐՑՆԵԼ՝ Ի՞նչ պայմանով (ի՞նչ պիտի ստանա Հայաստանը դրա դիմաց այդ պետությունից/կառույցից) [ԳՐԱՆՑԵԼ ԲՈԼՈՐ ՀՆՉԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ]
- [ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ] _____
 - չգիտեմ
 - հրաժարվում եմ պատասխանել

[ԿԱՐԴԱԼ ԴԱՆԴԱՂ ԵՎ ՀՍՍԿ] ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԻ ԳԻՏԵՔ, ՈՐ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՄԻԱՅՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԶՈՐԱՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ԹՈՒՅԼ ՏՎԵՔ ԱՆՑՆԵԼ ՀԱԶՈՐԴ ՀԱՐՑԻՆ:

10. Ձեր կարծիքով՝ Ռուսաստանի ռազմական զորամիավորումների ներկայությունը Հայաստանում որքանո՞վ է նպաստում կամ խոչընդոտում Հայաստանի ազգային անվտանգության ապահովմանը [ԿԱՐԴԱԼ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ՆՇԵԼ ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ]:

- նպաստում է մեծ չափով
- նպաստում է որոշ չափով
- ոչ նպաստում է, ոչ էլ խոչընդոտում
- խոչընդոտում է որոշ չափով
- խոչընդոտում է մեծ չափով
- (կապ չունի ազգային անվտանգության հետ)
- չգիտեմ
- հրաժարվում եմ պատասխանել

11. Ի՞նչ եք (դուք անձամբ) ակնկալում ռուսական ռազմական զորամիավորումների ներկայությունից Հայաստանում: [ԳՐԱՆՑԵԼ ԱՌԱՋԻՆԸ ՆՇԱԾ ՄԻՆՉԵՎ ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ]

- [ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ] _____
- [ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ] _____
- [ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ] _____
- չգիտեմ
- հրաժարվում եմ պատասխանել

12. Ըստ ձեզ, այսօրվա դրությամբ ո՞րն է Հայաստանի ամենամեծ օգուտը Ռուսաստանի ռազմական զորամիավորումների ներկայությունից Հայաստանում [ԳՐԱՆՑԵԼ ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ]:

- [ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ] _____
- չգիտեմ
- հրաժարվում եմ պատասխանել

13. Ըստ ձեզ, ո՞րն է Հայաստանի ամենամեծ վնասը Ռուսաստանի ռազմական զորամիավորումների ներկայությունից Հայաստանում [ՆՇԵԼ ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ]:

- [ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ] _____
- չգիտեմ
- հրաժարվում եմ պատասխանել

14. Ձեր կարծիքով, եթե Հայաստանը չմիանար Եվրասիական տնտեսական միությանը, արդյոք դա պատճառ կլինե՞ր, թե՞ պատճառ չէր լինի Արցախի փաստացի անկախության վտանգման համար [ԿԱՐԴԱԼ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ՆՇԵԼ ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ]

- մեծ չափով պատճառ կլինեն
 - ավելի շուտ պատճառ կլինեն
 - ավելի շուտ պատճառ չէր լինի
 - ընդհանրապես պատճառ չէր լինի
 - *չգիտեմ*
 - *հրաժարվում եմ պատասխանել*
15. Հարցվողի ծննդյան տարեթիվը [ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԻՍՏԱՆԸ]
16. Հարցվողի սեռը [ԶԿԱՐԴԱԼ ՀԱՐՑԸ, ԳՐԱՆՑԵԼ ՍԵՌԸ]
17. Հարցվողի կրթության ամենաբարձր աստիճանը՝ հաշվի առնելով վերջին ուսումնական հաստատությունը, որն ավարտել է [ԶԿԱՐԴԱԼ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ]
- տարրական կրթություն չունեմ
 - տարրական կրթություն
 - միջնակարգ
 - ավագ
 - միջին մասնագիտական
 - բարձրագույն
 - հետբուհական
 - այլ [ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԻՍՏԱՆԸ] _____
 - *չգիտեմ*
 - *հրաժարվում եմ պատասխանել*
18. Քանի՞ չափահաս մարդ է բնակվում ձեր տնային տնտեսությունում: [ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԻՍՏԱՆԸ]
19. Կասե՞ք՝ գյուղ ենք զանգել, թե՞ քաղաք [ԶԿԱՐԴԱԼ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ԳՐԱՆՑԵԼ ՊԱՏԱՍԻՍՏԱՆԸ]
- գյուղ
 - քաղաք